Բաց յայսցանէ կան և ուրիշ վարժարանք և մարզոցք, որոց մին թէպէտ և կրէ ազգիս երանելի Թարգմանչաց անուանքը 'ի ճակատու, այլ եթէ երանելեաց ոգին հոն չի տիրել, միայն պիտակ անուանքն՝ չեմ կարծել որ մեծ օգուտ բերեն Նախիջևանցւոց։

Ժ

ՍՈՒՐԲ ԽԱՉ ՎԱՆՔ

Սուրբ խաչ Նախիջևանու հիւսիսային կողմը, քաղաքէն եօթն վերստ հեռաւորութեամբ, ապառաժ լերին վրայ շինուած է. դիրքը գայելուչ է, այլ եկեղեցւոյն ճարտարապետութիւնը նոյն է՝ ինչ որ ուրիշ քաղաքին եկեղեցիք։ Սորա հիմը օրհնած է 1784 ին Յովսէփ Արղութեանց. վանքը կամ առաջնորդարանն նոյն ապառաժին վրայ շինուած են անշուք սենեկներով. ապառաժէն քաղցրահամ ջրոյ աղբիւր կը հոսի դէպ 'ի վար, ուր շինուած է ընդարձակ պարտէզ։ Վանքն ունեցել է ժամանակաւ կոկիկ մի հայ տպարան, ուր և տպուած են զանազան գրեանք. այժմ կարեւորութիւն չկայ տպարանի, վասն զի Ռոստովի մէջ Պ. Յովհաննու Տէր — Աբրահամեան տպարանը իւր արագատիպ մեքենայիւք, նոյնպէս և Նախիջևանու մէջ Պ. Յարութեանը, կարող են տպել և հրատարակել արագապէս ամենայն հայ մտաց և գրչաց արտադրութիւնք։ Կայ այժմ վանքին մէջ դպրոց կամ կղերանոց, ուր քառասնիւ չափ աշակերտք, ընդ խնամով մեծապատիւ վանահօր Տեառն Կիւրղի